

**ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

ՀՏԴ 338.2

DOI 10.56246/18294480-2022.12-20

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

ԵՊՀ, ԳՊՀ դասախոս

Էլիոսյու՝ valeriaraqelyan@ysu.am

ՀՈՒՍԻԿՅԱՆ ԴԱՎԻԹ

տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀԱՊՀ դասախոս

Էլիոսյու՝ dhusikyan@seua.am

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ,

Էլիոսյու՝ vardanyan717@gmail.com

Շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած տնտեսվարող սուբյեկտը ինքն է ընդունում և իրականացնում տնտեսական որոշումներ, ուստի դրանց հետևանքների պատասխանատվությունը անմիջապես ընկած է իր վրա: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտները ստիպված են որոշումներն ընդունել ռիսկի առավելության պայմաններում, որն էլ էապես դժվարացնում է հիմնավորված որոշումների ընդունումը: Որպեսզի տնտեսվարող սուբյեկտը ապահովի ինչպես ֆինանսական կայունությունը, այնպես էլ կառավարման գործընթացը, պետք է հաշվի առնի ռիսկի ազդեցությունը, ճիշտ նույնականացնելով կոնկրետ ռիսկը: Պարզ է, որ ձեռնարկատիրական ռիսկի կառավարումը ենթադրում է համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են ձեռնարկատիրական սուբյեկտի վրա անցանկալի ներգործությունները վաղորոք չեզոքացնելու համար միջոցառումների մշակմանը: Այդ նպատակով հողվածում առաջադրվել է մոտեցում, որի շնորհիվ հնարավոր է ձեռնարկատիրական ռիսկերը հասցնել նվազագույնի:

Հեղինակների կողմից առաջադրված մոդելի լուծման արդյունքները ցույց են տալիս, որ ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման գործընթացում անհրաժեշտ է կիրառել տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ, որոնք ավելի ճշգրտորեն են բնութագրում ռիսկերի վրա ազդող գործոնների համալիրը: Կարարված հաշվարկները ցույց են տալիս, որ անընդհատ արտադրության կազմակերպություններում կիրառ-

ված մեթոդը ազատում է ռիսկերը հասցնել նվազագույնի, հեղուկաբար ապահովել ֆինանսական կայունություն:

Քանալի բառերը՝ ձեռնարկատիրություն, ռիսկ, գործընթաց, կառավարում, շուկայական տնտեսություն, բացահայտում, վերլուծություն, գնահատում, մոդել, գործիչներ, մեթոդներ:

Շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած կազմակերպություն ինքն է ընդունում և իրականացնում տնտեսական որոշումները, ուստի դրանց հետևանքների պատասխանատվությունը անմիջապես ընկած է իր վրա:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունների արդյունքները, կազմակերպությունները ստիպված են որոշումներն ընդունել ռիսկի առավելագույն պայմաններում, որն էլ էապես դժվարացնում է հիմնավորված որոշումների ընդունումը: Այդ իսկ պատճառով կազմակերպությունների ֆինանսական կայունությունն անհնար է ապահովել առանց ռիսկի ազդեցությունը հաշվի առնելու, իսկ գործունեության արդյունավետ կառավարման համար կարևոր է իմանալ ոչ միայն ռիսկի գոյության մասին, այլ նաև ճիշտ նույնականացնել կոնկրետ ռիսկը: Ուստի ֆինանսատնտեսական գործունեության կարևոր կանոններից մեկի համաձայն՝ «Պետք է ոչ թե խուսափել ռիսկից, այլ ձգտել նվազեցնել այն՝ հասցնելով առավել ցածր մակարդակի»¹: Իսկ վերջինս պահանջում է ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարում:

Ակնհայտ է, որ ձեռնարկատիրական ռիսկի կառավարումը ենթադրում է համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են ձեռնարկատիրական սուբյեկտի վրա անցանկալի ներգործությունները վաղօրոք չեզոքացնելու համար միջոցառումների մշակմանն ու իրականացմանը²:


Ձեռնարկատիրական ռիսկի կառավարման գործընթացում իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում անհրաժեշտ տվյալների հավաքագրումն ու դրանց մշակումը, քանի որ կառավարման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է հավաքագրված տեղեկատվության արժանահավատությամբ, դրանք պետք է լինեն որակապես լիարժեք և ժամանակակից:

¹ Տե՛ս Гранатуров В. М., Экономический риск: сущность, методы измерения, пути снижения/ Учебное пособие, М., “Дело и Сервис”, 2002, էջ 112:

² Տե՛ս Ареопар-М. Управление предпринимательскими рисками /<http://www.areopag.ru/>:

Ինչպես նշել է Գերմանական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Մարկ Հիլբերտը, 21-րդ դարում, շուկաների գլոբալացմամբ պայմանավորված, խիստ մրցակցության պայմաններում հաղթանակ կտանեն ոչ թե մեծ ձեռնարկությունները փոքրերի, այլ ավելի դինամիկներն ու ճկունները արտաքին փոփոխություններին առավել դանդաղ արձագանքողների նկատմամբ³:

Պրակտիկան փաստում է, որ ռիսկի արդյունավետ կառավարման գործընթացում ռիսկերը գնահատելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը միաժամանակ ներկայացվում են հատուկ պահանջներ: Դրանք պայմանավորված են այն հանգամանքով, որ լիարժեք տեղեկատվության բացակայությունը ռիսկի վրա ազդող ամենաէական գործոններից մեկն է, և որ ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում որոշումների ընդունման համար կատարվում են ֆինանսական լրացուցիչ ծախսեր, այսինքն՝ կազմակերպություններն ու գործընկերները արդյունքում ունենում են կորուստներ և միաժամանակ սպասվելիք շահույթի նվազում: Ռիսկի կառավարման գործընթացի հիմնական փուլերը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով (գծապատկեր 1):



Գծապատկեր 1 Ձեռնարկատիրական ռիսկի կառավարման գործընթացի հիմնական փուլերը:

³ Ст'ю Гайкова Е. Шубин А. Сколько стоит эффективное управление? /Экономика и жизнь, 11.09.2002 (№ 172):

Ինչպես հետևում է գծապատկերից, ռիսկի կառավարման առաջին փուլում անհրաժեշտ է հավաքագրել տեղեկատվություն ռիսկը կրող օբյեկտի վերաբերյալ: Այս փուլը, ըստ Ն. Վ. Խոխլովի⁴, կոչվում է «ռիսկի բացահայտում» և ներառում է երկու ենթափուլ՝ օբյեկտի կառուցվածքի մասին տեղեկատվությունների ընտրություն և վտանգների կամ միջադեպերի բացահայտում:

Ռիսկ կրող օբյեկտի վերաբերյալ ելակետային տեղեկատվություն ստանալու միջոցների թվին կարելի է դասել՝

- ստանդարտ հարցումների թերթիկը,
- կազմակերպության սկզբնական հաշվետվությունների (ֆինանսական, կառավարչական) վերլուծությունը և քննարկումը,
- եռամսյակային և տարեկան ընդհանրական ֆինանսական հաշվետվության տվյալների վերլուծությունը,
- կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի վերլուծությունը,
- արտադրական ստորաբաժանումների տեսչական այցերը, տվյալ ճյուղի մասնագետների խորհրդատվությունը,
- խորհրդատվական կազմակերպությունների կողմից փաստաթղթերի փորձաքննությունը:

Ռիսկի կառավարման երկրորդ փուլում իրականացվում է ռիսկի որակական և քանակական վերլուծություն և գնահատում:

Ռիսկի կառավարման երրորդ փուլում ընտրվում է ռիսկի վրա փոխազդելու մեթոդը՝ ապագայում հնարավոր վնասները նվազագույնի հասցնելու նպատակով: Տնտեսական պրակտիկայում գոյություն ունեն ռիսկի նվազեցման բազմաթիվ մեթոդներ, ուստի ռիսկերի գնահատման համար խնդիր է առաջանում գնահատել ռիսկի վրա փոխազդելու մեթոդների համեմատական արդյունավետությունը՝ դրանցից լավագույնը ընտրելու նպատակով⁵:

Այնուհետև չորրորդ փուլում իրականացվում է ռիսկի վրա փոխազդելու օպտիմալ մեթոդների ընտրություն և մշակվում է կազմակերպության ռիսկերի համալիրի կառավարման ընդհանուր ռազմավարությունը: Հետևաբար այս փուլը որոշումների ընդունման փուլն է, որտեղ որոշվում են պահանջվող ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները, այնուհետև ձևակերպվում է

⁴ St'u Хохлов Н. В., Управление риском/ Учеб. пособие для вузов, М., ЮНИТИ-ДАНА, 2001:

⁵ St'u Хохлов Н. В., Управление риском / Учеб. пособие, М., ЮНИТИ-ДАНА, 2001:

խնդիրը և բաշխվում կառավարիչների միջև, կատարվում է համապատասխան շուկաների վերլուծություն, անցկացվում են խորհրդատվություններ մասնագետների հետ:

Կոնկրետ որոշումների ընդունման գործընթացում նպատակահարմար է ռիսկի գոտիների տարբերակումը և առանձնացումը՝ կախված ֆինանսական գործունեության մեջ հնարավոր կորուստների մակարդակից⁶: Ծախսերի նպատակահարմարության մեթոդի կիրառմամբ յուրաքանչյուր տարի ծախսերը բաժանվում են ռիսկի գոտիների (որոնք ներկայացնում են ընդհանուր կորուստների գոտին), որոնց սահմաններում կոնկրետ կորուստները չեն գերազանցում ռիսկի սահմանված մակարդակի առավելագույն արժեքը (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1
Կազմակերպության գործունեության գոտիները:

Կազմակերպության գործունեության գոտիները	Բացարձակ կայունություն	Նորմալ կայունություն	Անկայուն վիճակ	Կրիտիկական վիճակ	Ճգնաժամային վիճակ
Ռիսկի գոտիները	Անառիկ գոտի	Նվազագույն ռիսկի գոտի	Բարձր ռիսկի գոտի	Կրիտիկական ռիսկի գոտի	Անբյուջատ. ռիսկի գոտի
Առավելագույն կորուստները	Վնասի լիովին բացակայություն	Զուտ շահույթ	Հաշվարկային շահույթ	Համախառն շահույթ	Իրացումից ստացված հարկ և ֆիրմայի ունեցվածք
Ե գործակիցը (%)	0	0-25	25-50	50-75	75-100

Ինչպես հետևում է աղյուսակից, տարրերի ծախսերի ռիսկի աստիճանը բացարձակ կայունության գոտում զրոյական է: Այս գոտին բնութագրվում է կորուստների բացակայությամբ ձեռնարկատիրական այնպիսի գործունեու-

⁶ St'u Райзберг Б. А., Азбука предпринимательства МИП Дума, Москва, 1991, էջ 54-61:

թյան դեպքում, երբ սպասվելիք զուտ շահույթի մեծությունը երաշխավորված է: Նորմալ կայունության գոտում ծախսերը բնորոշվում են ռիսկի նվազագույն աստիճանով, որը ստացվում է կազմակերպության բոլոր ծախքերի և հարկերի փոխհատուցումից հետո, այլ կերպ ասած՝ ապահովում է զուտ շահույթ: Անկայուն վիճակի գոտին բնութագրվում է բարձր ռիսկերի դեպքում, կորուստների մակարդակը չի գերազանցում հաշվարկային շահույթի մեծությունը: Կրիտիկական վիճակի գոտու սահմանագծի վրա, որին համապատասխանում է ռիսկի կրիտիկական աստիճանը, հնարավոր են կորուստներ համախառն շահույթի չափով, որը կազմակերպության կողմից ստացված շահույթն է արտադրական ծախսերը հանելուց հետո: Նման ռիսկն անցանկալի է, քանի որ այդ դեպքում կազմակերպությունը կարող է ոչ միայն կորցնել շահույթը, այլ նաև ամբողջությամբ չծածկել ծախքերը: Անթույլատրելի ռիսկը, որը համապատասխանում է ճգնաժամային գոտու վիճակին, նշանակում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի կողմից այնպիսի ռիսկի ընդունում, որը ենթադրում է կազմակերպության տվյալ գործունեության բոլոր ծախքերը չծածկելու հնարավորություն, այլ կերպ ասած՝ կազմակերպությունը գտնվում է սնանկացման եզրին: Սովորաբար ուսումնասիրությունները կատարվում են նախորդ ժամանակահատվածի տվյալների հիման վրա վարիացիոն գործակցի (b) հաշվարկից հետո, ծախսերի յուրաքանչյուր հոդված վերլուծվում է առանձին վերցրած՝ նույնականացվում և՛ ըստ ռիսկի գոտիների, և՛ առավելագույն կորուստների: Ընդ որում ձեռնարկատիրական գործունեության ամբողջ ուղղվածության ռիսկի աստիճանը համապատասխանում է այն տարրի ծախսերի ռիսկի աստիճանին, որի արժեքն առավելագույնն է:

Ռիսկի կառավարման հինգերորդ փուլում իրականացվում է ռիսկի վրա անմիջական փոխազդեցություն, որն իրականացվում է երեք եղանակով՝ 1) ռիսկի նվազեցում, 2) ռիսկի պահպանում, 3) ռիսկի փոխհատուցում:

Ռիսկի նվազեցումն ենթադրում է կա՛մ հնարավոր կորստի չափերի, կա՛մ անբարենպաստ իրադրությունների երևան գալու հավանականության փոքրացում: Պրակտիկայում գոյություն ունեն ռիսկերի նվազեցման բազմաթիվ ուղիներ և միջոցներ: Օրինակ՝ դիվերսիֆիկացիա, ընտրության և արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունների ձեռքբերում, լիմիտավորում, ապահովագրություն, հսկողություն թողարկվող արդյունքի կամ մատուցվող ծառայության ռիսկի նկատմամբ, կազմակերպության կադրերի

մանրակրկիտ ընտրություն, պայմանագրերի ճիշտ ձևակերպում, ստուգում և այլն:

Հարկ է նշել, որ առաջավոր երկրներում ռիսկի նվազեցման ամենատարածված եղանակներից է խեղժավորումը (նշանակում է կորստից (վնասից) պատսպարվել կամ պաշտպանվել): Այն ապահովագրման տարատեսակ է, որը ՀՀ-ում դեռևս տարածում չի գտել: Խեղժավորումը ռիսկի ապահովագրումն է պայմանագրերով առևտրային գործառույթների իրականացման ժամանակ, երբ տեղի է ունենում ապրանքների գների փոփոխություն:

Ռիսկի պահպանումը գոյություն ունեցող մակարդակի վրա միշտ չէ, որ ենթադրում է հրաժարում վնասի փոխհատուցմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից, չնայած նման հնարավորություն նախատեսվում է (այսինքն՝ ռիսկ առանց ֆինանսավորման): Հաճախ կազմակերպությունը ռիսկային իրավիճակների բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով իրականացնում է միջոցների պահեստավորում: Դա ենթադրում է, որ ձեռնարկատերը ստեղծում է վնասների փոխհատուցման առանձին ֆոնդեր՝ սեփական շրջանառու միջոցների հաշվին: Վնասները ծածկելու նպատակով միջոցների պահեստավորումը հաճախ անվանում են ինքնաապահովագրություն:

Ռիսկի փոխանցման նպատակով իրականացվող միջոցառումները նշանակում են ռիսկի համար պատասխանատվության փոխանցում երրորդ կողմին ռիսկի՝ գոյություն ունեցող մակարդակի պահպանման դեպքում: Այս դեպքում կիրառվում են ռիսկի ապահովագրության հետևյալ տեսակները՝ համատեղ ապահովագրություն և վերաապահովագրություն:

Ռիսկի կառավարման ավարտական փուլում կատարվում է ընտրված ռազմավարության իրականացման արդյունքների ստուգում և ճշտում՝ հաշվի առնելով նոր տեղեկատվությունը: Ստուգման ժամանակ կառավարիչները տեղեկատվություն են տալիս առաջացած վտանգների և դրանք նվազագույնի հասցնելու նպատակով կիրառված միջոցառումների վերաբերյալ: Ստուգման արդյունքում կարող են բացահայտվել ռիսկի մակարդակը փոփոխող նոր իրավիճակներ, այդ տվյալները փոխանցվում են ապահովագրական ընկերությանը, հսկողություն է սահմանվում անվտանգությունն ապահովող համակարգի աշխատանքի արդյունավետության նկատմամբ և այլն:

Պարզ է, որ յուրաքանչյուր ձեռներեց իր գործունեությունը սկսելու հենց առաջին պահից բախվում է նյութական, ֆինանսական, աշխատանքային



ռեսուրսների տեղաբաշխման և օգտագործման վերաբերյալ որոշումների ընդունման ռիսկի: Գործունեության մեջ ռեսուրսների օպտիմալ բաշխման խնդիրը կապված է արտադրական պահանջմունքների անսահմանափակության հետ, և դրանք սահմանափակ են, ուստի ռեսուրսների արդյունավետ կառավարման ռիսկի մակարդակը նվազեցնելու նպատակով, կարծում ենք, նպատակահարմար է կիրառել հետևյալ կանոնները.

- Չպետք է խուսափել ռիսկից, այլ պետք է կանխատեսել այն և ձգտել նվազեցնել մինչև հնարավոր նվազագույն մակարդակը:

- Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է գնահատել, թե կորուստների ինչպիսի տեսակներ են առավել հնարավոր և հավանական այդ գործընթացում, ինչպիսին է դրանց սպասվող մեծությունը և որքան հաճախ դրանք կարող են առաջանալ:

- Առանձնապես չպետք է սարսափել կորուստներից, որոնց մեծությունը չի գերազանցում հաշվարկային սպասվող շահույթը, նման կորուստները համարվում են թույլատրելի, սակայն դրանք չպետք է լինեն շատ հաճախ, դրանց հավանականությունը միշտ պետք է շատ փոքր լինի:

- Սպասվող կորուստները, որոնք ծագման մեծ հավանականություն ունեն, և սպառնացող վնասները, որոնք էապես գերազանցում են շահույթը, պետք է զգաստացնեն ձեռներեցին: Այս դեպքում ձեռներեցը պետք է ստեղծի ապահովագրական հատուկ պահուստային ֆոնդ և հստակ պատկերացնի, թե ինչպիսի աղբյուրներից պետք է փոխհատուցվեն կորուստները դրանց ծագման դեպքում:

- Եթե ձեռնարկատերը կանխատեսելով գնում է բավականաչափ հավանական կորուստների ռիսկի, որը զգալի գերազանցում է շահույթը և ի վիճակի է նրան ֆինանսական խոշոր վնասներ հասցնել, ապա ձեռնարկատերը պարտավոր է ապահովագրել իրականացվող գործունեությունը: Ռիսկի ապահովագրումը դրա նվազեցման լավագույն միջոցներից մեկն է, բայց այն կապված է նոր կորուստների հետ՝ ապահովագրական վճարների տեսքով, որոնք պետք է համապատասխանեն ձեռնարկատիրոջ կարողությանը:

- Կրիտիկական ռիսկի առաջացման դեպքում ցանկալի է, համաձայն պայմանագրի, ռիսկը բաժանել գործունեության բոլոր մասնակիցների միջև այնպես, որ համընդհանուր ուժերով հնարավոր լինի փոխհատուցել հնարավոր կորուստները:

- Պետք է խուսափել աղետային ռիսկի հետ կապված գործունեությունից, քանի որ այս կորուստները ձեռնարկատերը ի վիճակի չէ փոխհատու-

ցել: Այսպիսի կորուստների հավանականությունը պետք է լինի այնքան փոքր, որ նա հաշվի չառնվի: Հակառակ դեպքում անթույլատրելի է նման գործ սկսելը:

Մեր կողմից ներկայացված են արտադրական կազմակերպությանը բնորոշ կորուստները, որոնք ձեռնարկատիրական ռիսկերի արդյունք են: Դրանք են՝ արտադրանք մատուցվող ծառայության իրացման ծավալների նվազումը, վաճառքի համար սահմանված գնի նվազումը, նյութական ծախսերի աճը, հարկերի, տուրքերի ու տուգանքների պատճառով կորուստների մեծացումը և այլ պատճառներով կորուստները: Նշված կորուստները մեծանում են նաև այլ պատճառներով: Նշված կորուստների մեծությունը կարելի է հաշվարկել հետևյալ մեթոդով՝

$$\Pi = \sum_{i=1}^n \Delta \Pi_i, i=1, 2, \dots, n$$

որտեղ $\Delta \Pi_i$ -ին i -րդ աղբյուրից ծագած կորուստներն են: Վերոհիշյալ կորուստներից խուսափելու և դրանք նվազագույնի հասցնելու գլխավոր պայմաններից մեկը ռիսկերի կառավարման արդյունավետ ուղիների ընտրությունն ու իրականացումն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռիսկերը նվազագույնի հասցնելու լավագույն ուղիներից մեկը տնտեսամաթեմատիկական մոդելի մշակումն ու կիրառումն է: Նման մոտեցում առաջադրվել է մեր կողմից, որի լուծման արդյունքները բերված են ստորև.

$\alpha = 25;$

$b = 50;$

$c = 75;$


$d = 100;$

$s = \alpha * q + b * q + c * q + d * q;$

$\sigma = \frac{1}{3} * s;$

$f[q_] = \frac{1}{\sqrt{2 * \pi} * \sigma} * \int_0^q e^{-(q-s)^2 / (2 * \sigma^2)} dq;$

`Plot[{f[0.3, q], f[0.5, q], f[0.7, q], f[0.9, q]},
{q, 0, 1500}, PlotRange -> {0, 1}]`



-Graphics-

Հաշվարկները ցույց են տալիս, որ նման մոտեցումը հնարավորություն է տալիս ցանկացած կազմակերպությանը խոսափել կամ նվազագույնի հասցնել ձեռնարկատիրական գործունեության ժամանակ ստացող կորուստները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Арсопач М., Управление предпринимательским рисками (<http://www.areopaz.ru>):
2. Гранатуров В. М., Экономический риск: сущность, методы измерения, пути снижения/ Учебное пособие, М., “Дело и Сервис”, 2002:
3. Хохлов Н. В., Управление риском/Учеб. пособие для вузов, М., ЮНИТИ-ДАНА, 2001.
4. Райзберг Б. А., Азбука предпринимательства, МИП Дума, Москва, 1991.

ISSUES FOR EFFECTIVE MANAGEMENT OF ENTREPRENEURSHIP RISKS

ARAKELYAN VALERI

PhD in Ecconomics, Associate Professor,

YSU, GSU Lecturer

e-mail: valeriaragelyan@ysu.am

HUSIKYAN DAVID

Candidate of Technical Sciences, Associate Professor,

NPUA Lecturer

e-mail: dhusikyan@seua.am

VARDANYAN SARGIS

Applicant at the Department of Management and Entrepreneurship, YSU

e-mail: vardanyan717@gmail.com

In the market economy, any economic agent makes its own decisions, hence taking responsibility for the outcomes thereof. Thus, economic agents must make decisions in the augmented risk environment. The latter largely complicates the decision-making process. For an economic agent to secure financial stability, as well as a management process, it should take into account risk impact. First and foremost, it should correctly identify the very risk. Entrepreneurship risk management implies complex measures, aimed at minimizing in advance unwanted effects on entrepreneurs. For this purpose, this article suggests a solution, that enables the minimization of entrepreneurship risks.

The results of the solution of the model proposed by the authors show that in the process of business risk management it is necessary to use economic-mathematical methods and models, which more accurately describe the set of risk



factors. The calculations show that the method used in continuous production organizations relieves the risks to a minimum, thus ensuring financial stability.

Keywords: *Entrepreneurship, risk, process, management, market economy, discovery, analysis, assessment, model, zones, methods.*

ПОДХОДЫ К ЭФФЕКТИВНОМУ УПРАВЛЕНИЮ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКИМИ РИСКАМИ

АРАКЕЛЯН ВАЛЕРИЙ

Кандидат экономических наук, доцент

Преподаватель ЕГУ, ГГУ

электронная почта: valeriaragelyan@ysu.am

УСИКЯН ДАВИД

Кандидат экономических наук, доцент

электронная почта: dhusikyan@seua.am

ВАРДАНЯН САРГИС

Соискатель кафедры управления и предпринимательства ЕГУ

электронная почта: vardanyan717@gmail.com

В условиях рыночного хозяйства любой субъект хозяйствования сам принимает и реализовывает экономические решения, поэтому ответственность последствий этих решений непосредственно лежит на нем. Следовательно, субъекты хозяйствования вынуждены принимать решения в условиях превосходящего риска, что существенно усложняет принятие обоснованных решений. Чтобы субъект хозяйствования смог обеспечить как финансовую стабильность, так и процесс управления, он должен учитывать влияние риска, в точности отождествляя конкретный риск. Ясно, что управление предпринимательским риском предполагает комплекс мероприятий, которые направлены на разработку мероприятий по нейтрализации нежелательных воздействий на субъект предпринимательства. С этой целью в статье предлагается подход, благодаря которому предпринимательские риски можно свести к минимуму.

Результаты решения предложенной авторами модели показывают, что в процессе управления предпринимательскими рисками необходимо использовать экономико-математические методы – модели, более точно описывающие совокупность факторов риска. Расчеты показывают, что метод, применяемый в организациях непрерывного производства, сводит риски к минимуму, обеспечивая финансовую устойчивость.



Ключевые слова: *предпринимательство, риск, процесс, управление, рыночное хозяйство, выявление, анализ, оценка, модель, зоны, методы.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 03.03.2022թ.:

Հոդվածը գրախոսվել է 09.03.2022թ.: